**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**

**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*06 դեկտեմբերի 2018թվականի N 989*

*ՄԻԱՎՈՐՎԱԾ ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ և 7-րդ բաժինների պահանջների, հիմք ընդունելով Հերիքնազ Բաբաջանյանի 2018 թվականի դեկտեմբերի 4-ի դիմումը.*

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

*1.Տավուշի մարզի Հաղարծին գյուղի 5-րդ փողոցի թիվ 100 տան բնակչուհի Հերիքնազ Բաբաջանյանին սեփականության իրավունքով պատկանող /սեփականության իրավունքի գրանցման վկայականներ՝ 2462042 և 2462043, տրված՝ 2007 թվականի նոյեմբերի 8-ին/Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 38 շենքի թիվ 103ա և թիվ 103 հասցեներում գտնվող միավորված բնակարանին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս, շենք 38, բնակարան 103:*

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*06 դեկտեմբերի 2018թվականի N 990*

*ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ, 8-րդ բաժինների պահանջների, հիմք ընդունելով Ասյա Սարուխանյանի 2018 թվականի դեկտեմբերի 4-ի դիմումը.*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ</u>՝*

*1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Չարենցի փողոցի 16 տան բնակչուհի Ասյա Սարուխանյանին ժառանգության իրավունքով փոխանցված /ՀՐԱԶԴԱՆ նոտարական տարածքի նոտարի կողմից 2013 թվականի դեկտեմբերի 2-ին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր՝ գրանցված գրանցամատյանում՝ թիվ 463-ով, ժառանգական գործ՝ թիվ 21 / Հրազդան քաղաքի Չարենցի փողոցի 16Ա հասցեում գտնվող բնակելի տան հասցեն փոփոխել՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Հարավային թաղամաս, Չարենցի փողոց 16/1 հասցեով:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*06 դեկտեմբերի 2018թվականի N 991*

*ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ, 8-րդ բաժինների պահանջների, հիմք ընդունելով Պարգև Ղարիբյանի 2018 թվականի դեկտեմբերի 6-ի դիմումը.*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ</u>՝*

*1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամասի թիվ 45 տան բնակիչ Պարգև Ղարիբյանին սեփականության իրավունքով պատկանող /սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ 1793160, տրված՝ 2006 թվականի հունիսի 30-ին/ Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամասի 45 հասցեում գտնվող բնակելի տան հասցեն փոփոխել՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Ջրառատ թաղամաս 45/1 հասցեով:*

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*07 դեկտեմբերի 2018թվականի N 992*

## *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի N 984 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի օգնականի զեկուցագիրը.*

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ ՝*

*1.Ուժը կորցրած ճանաչել Հրազդան համայնքի ղեկավարի 2018 թվականի նոյեմբերի 30-ի «Գևորգ Անդրանիկի Մեսրոպյանի նկատմամբ խնամակալ նշանակելու մասին» N984 որոշումը:*

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը :*

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ*** ***Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*11 դեկտեմբերի 2018թվականի N 993*

*ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 15-ի որոշմամբ հաստատված հավելվածը և քաղաքի թվով 16/տասնվեց/ անապահով բնակիչների դիմումները՝*

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝*

*1.Հրազդան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 15-ի «Հրազդան համայնքի 2018 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 136-Ն որոշմամբ հաստատված բյուջեի հավելվածում «Այլ նպաստներ բյուջեից» /4729/ հոդվածով նախատեսված ծախսերից 280000 /երկու հարյուր ութսուն հազար/ դրամ հատկացնել Հրազդան քաղաքի թվով 16 /տասնվեց/ անապահով բնակիչների:*
*2.Հանձնարարել ֆինանսական բաժնին կատարելու նշված վճարումը:*
*3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*11 դեկտեմբերի 2018թվականի N 994*

*ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ՄԻԿՐՈՇՐՋԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 235 ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻՆ ԿԻՑ , ՇԵՆՔԻ ԾԱՎԱԼԻՑ ԴՈՒՐՍ, ԻՆՔՆԱԿԱՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ*

*Համաձայն Հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24 կետի, Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 25-րդ և 27-րդ կետերի, 2006 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 1855-Ն որոշմամբ հաստատված կարգերի.*

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝*

*1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի թիվ 235 բազմաբնակարան բնակելի շենքի ծավալից դուրս բնակարանին կամ ոչ բնակելի տարածքին կից ինքնակամ իրականացված կառույցները ճանաչել օրինական:*

*2.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի թիվ 235 բազմաբնակարան բնակելի շենքի ծավալից դուրս բնակարանին կամ ոչ բնակելի տարածքին կից ինքնակամ իրականացված կառույցների զբաղեցրած հողամասերն անհատույց բաժնային սեփականության իրավունքով փոխանցվում են շենքերի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին:*

*3.Շենքին կից ինքնակամ իրականացված կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, այն կառուցված է քաղաքաշինական նորմերով ու կանոններով, և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:*

*4. Շենքի զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի փաստացի մակերեսը կազմում է 0.056012 քմ, որը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2 և 3 ենթակետերի պահանջներին, ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում և համաձայն տարածագնահատման համաձայնեցված սխեմայի՝ գտնվում է 3-րդ գոտում:*

*5.Հողամասի սահմանները որոշվում են սահմանված կարգով հաստատված հատակագծով:*

*6.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:*

*7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ*** ***Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*11 դեկտեմբերի 2018թվականի N 995*

*ԳՐԱՄԵՆՅԱԿԻՆ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅԱԾ ՀԱՐԹԱԿԻ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑԱԾ ԴՌԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24 կետի, Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Սարգիս Սարգսյանի 2018 թվականի դեկտեմբերի 07-ի դիմումը.*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ</u>՝*

*1.Օրինական ճանաչել Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 13 շենքի թիվ 3 բնակարանի բնակիչ Սարգիս Սարգսյանի կողմից Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 235 շենքի թիվ 4 հասցեում գտնվող, իրեն սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 23022018-07-0038, ծածկագիր՝ U7WAJQAAIRLS) գրասենյակին կից ինքնակամ կառուցած 11.93 քմ արտաքին մակերեսով հարթակը և ինքնակամ բացած դուռը:*
*2.Սույն որոշման ընդունման օրվանից գրասենյակին կից ինքնակամ կառուցած հարթակի օրինականացման համար սահմանված 4700 (չորս հազար յոթ հարյուր) դրամ և դռանօրինականացման համար սահմանված 1300( մեկ հազար երեք հարյուր) դրամ գումարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:*
*3.Շինության պահպանումը վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, այն կառուցված է քաղաքաշինական նորմերով ու կանոններով, և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:*
*4.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:*
*5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *ՈՐՈՇՈՒՄ*

*11 դեկտեմբերի 2018թվականի N 996*

### *ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՆԱՏՈՒՐ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԿԱՌՈՒՑԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԱՅԴ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԶԱՆԻԿ ՊԱՏՎԱԿԱՆԻ ՂԱԶԱՐՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ մասի, Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի, Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ հոդվածի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի և հիմք ընդունելով Զանիկ Ղազարյանի 2018 թվականի դեկտեմբերի 7-ի դիմումը,Հայաստանի Ազգային Արխիվի Կոտայքի մարզային մասնաճյուղի N 151 արխիվային տեղեկանքը, տրված՝ 2006 թվականի ապրիլի 19-ին, Հողի սեփականության իրավունքի պետական ակտը՝ N 062901, տրված՝ 1997 թվականի ապրիլի 2-ին, համապատասխան որակավորում ունեցող կազմակերպության կողմից չափագրված և տրված շինության, դրա պահպանման և սպասարկման համար հողամասի մակերեսի համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագիծը.*

## *<u>ՈՐՈՇՈՒՄ ԵՄ</u>՝*

*1.Վերականգնել Հրազդան քաղաքի Վանատուր Նորակառույց թաղամասում գտնվող Զանիկ Ղազարյանին պատկանող 600.0 քմ մակերեսով օրինական հողամասին կից ավել օգտագործվող սահմանազատված 110.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ Զանիկ Ղազարյանի սեփականության իրավունքը:*

*2.Օրինական ճանաչել Հրազդան քաղաքի Վանատուր Նորակառույց թաղամասում գտնվող Զանիկ Ղազարյանին պատկանող հողամասում կառուցած 316.18 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը:*

*3.Հողամասի սահմանները որոշվում են «ԳԵՈԼԵՆԴ» սահմանափակ պատասխանատվությամբ*

*ընկերության կողմից չափագրված և Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:*

*4.Բնակելի տունը համապատասխանում է քաղաքաշինական նորմերին և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը:*

*5.Բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, օրինականացման համար նախատեսված վճարը չի գանձվում:*

*6.Ջանիկ Ղազարյանին պատկանող բնակելի տանը՝ դրա պահպանման և սպասարկման համար առանձնացված հողամասով տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Վանատուր Նորակառույց թաղամաս, Պուրակային փողոց, 3-րդ նրբանցք 7:*

*7.Առաջարկել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի միավորված մարզերի ստորաբաժանմանը՝ գրանցել քաղաքացի Ջանիկ Ղազարյանի սեփականության իրավունքներն ամրագրված հողամասի, բնակելի տան նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:*

*8.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:*

*9.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* — *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*12 դեկտեմբերի 2018թվականի N 997*

### *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի N 136-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 15-ի 137-Ն որոշումն՝*

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

*Հրազդան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 15-ի «Հրազդան համայնքի 2018 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 136-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ վերաբաշխումները՝*

*1.Ծախսային մասում՝*

*1) 1 բաժնի 1 խմբի 1 դասի 51 ծրագրի «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» /4239/ հոդվածում «2380.2» թիվը փոխարինել «2545.2» թվով, «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» /4111/ հոդվածում «145679.7» թիվը փոխարինել «145514.7» թվով:*

*2) Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝*** ***Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***